ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 82

<05> 12 201 թ.

ք. Արտաշատ

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասով, հիմք ընդունելով Արարատի մարզի Հայանիստ գյուղի բնակիչ Ռիտա Միխայիլի Բալասանյանի դիմումը և ներկայացված փաստաթղթերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արարատի մարզի Հայանիստ գյուղի Գետաշեն թաղամասի թիվ 1/51 սեփական տնամերձ հողամասի վրա կառուցված քոթեջատիպ տունը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով սեփականաշնորհել այդ բնակարանի վարձակալ Ռիտա Միխայիլի Բալասանյանի 3/երեք/ անձից բաղկացած ընտանիքի ներքոհիշյալ անդամներին.

   1) Ռիտա Միխայիլի Բալասանյան
   2) Շամիր Պապիկի Լազգյան
   3) Պապիկ Շամիրի Լազգիյան

2. Բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Սույն պայմանագիրը կնքված է ՀՀ փախստականների հարցերի պետական վարչության ու _____ շրջանի _____ գյուղական խորհրդի, որոնք հետագայում կանվանվեն «Տանտեր», և _____ (փախստական ընտանիքի ղեկավարի անունը) _____-ի միջև, որը հետագայում կանվանվի «Բնակիչ», հասցեն՝ _____

(միասին կանվանվեն «Կողմեր»):

1. Տանտերը պարտավոր է Բնակչին հատկացնել 36 քառ. մետր մակերեսով մեկ տուն, որի շինարարությունը կատարվում է _____ (կապալառուի անվանումը) -ի կողմից ՄԱԿ-ի փախստականների հարցերի գլխավոր հանձնակատարի «Ծածկ» ծրագրի համաձայն, որն իրականացնում է Հայաստանի երիտասարդ մարդկանց քրիստոնեական ընկերակցությունը: Տան հատակագծի և պատերի մոտավոր գծագրերը կցվում են:
2. Բնակիչը համաձայն է, որ իրեն հատկացված հողակտորի վրա տուն կառուցվի, և հասկանում է, որ երկու Կողմերի կողմից սույն պայմանագրի ստորագրման պահից պարտավորվում է կատարել հետևյալ պայմանները.

   ա) Տունը ստանալուց հետո Բնակիչն իր ընտանիքի բոլոր անդամների հետ պետք է պաշտոնապես գրանցվեն տեղական մարմիններում: Տան հասցեն՝ _____, _____

բ) Պայմանագիրը ստորագրելուց հետո հինգ տարվա ընթացքում տան սեփականատերը հանդիսանալու է **Տանտերը**: Այդ ժամանակաշրջանում **Բնակիչն** իրավունք չի ունենալու տունը վաճառելու, վարձով կամ այլ կերպ ուրիշ անձանց հատկացնելու:

գ) Ժամանակավորապես այլ բնակավայր տեղափոխվելու դեպքում **Բնակիչը** պետք է գրավոր տեղեկացնի **Տանտիրոջը**: Մշտական բնակության նպատակով այլ բնակավայր տեղափոխվելուց առաջ **Բնակիչը** պետք է գրավոր տեղեկացնի **Տանտիրոջը** և տունը հողամասի հետ հանձնի **Տանտիրոջը**՝ այլ փախստական ընտանիքի հատկացնելու համար:

դ) Հիմնական բնակավայր տեղափոխվելուց առաջ **Բնակիչը** պարտավոր է նախկինում զբաղեցրած ժամանակավոր պետական կացարանը հանձնել կացարանի տնօրինությանը և այդ մասին գրավոր հայտնել ՀՀ փախստականների հարցերի պետական վարչությանը:

3. **Տանտերը Բնակչին** ապահովում է տնով և ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) **Տանտերը** ոչ մի վարձ չպետք է գանձի բացի պետականորեն սահմանված տան վարձից:

բ) **Տանտերը** իրավունք չունի **Բնակչին** տնից հանելու, բացառությամբ այն դեպքերի, երբ **Բնակիչը** տունն օգտագործում է սույն պայմանագրի պահանջների և պայմանների խախտումով:

4. Սույն պայմանագիրը ստորագրելուց հինգ տարի հետո սեփականատիրոջ իրավունքն անցնում է Բնակչին՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության համաձայն:

5. Սույն պայմանագրից ծագած վիճելի հարցերը կարգավորվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ դատարանի միջոցով, որի կայացրած որոշումը պարտադիր է բոլոր Կողմերի համար:

ՀՀ փախստականների հարցերի պետական վարչության ներկայացուցիչ

Գյուղական խորհրդի ներկայացուցիչ

Բնակիչ

Ամսաթիվը՝ 30 01 95 Ամսաթիվը 30 01 95 Ամսաթիվը 30 01 95